




953

L I 6







ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ, ԹԻՒ Լ

15 Ապրիլ 1890



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՂՏԱՏԵԱՆ

Փողոց Սուրբուհի Համբար, Թիւ 14

1890

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՊԱՏՃԱՌՔ ՊԱՏԿԵՐ ՀԱՆԴԻՍԻՍ. — *Խմբագրություն:*
2. ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԵՒ ԵՐԿՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ. Մասնաց Ա-
դամի: *
3. ԾԻՍԱԿԱՆ. Միլանի եկեղեցւոյն մէջ գտնուած յոյն ծիսից.
նշմարանք: *
4. ԲԱՐՈՅԱԿԱՆ. Օրէնք: *
5. ՏԱՆԴԷ. Մաքրաւան. Երգ առաջին. — *Թարգմ. Հ.
Դաւիթ Վ. Նազարեքեան:*
6. ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ. Արդի հայերէնն հորոգութեան պէտք
ունի: — Հ. Սերովրէ Վ. Տերվիշեան:
7. ՊԱՏՄԱԿԱՆ. Պարբնոս Կուռնեղիոս Սկիպիոն: *
8. ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ. Երկրագնոյս շարժումն եւ օրուան
շեղուղիները: *
9. ՀԱՅԿԱԿԱՆ ԹՎԱԳՄԱՆՈՒԹԻՒՆԻ ՆԱԽՆԵՈՅ. Պիտիգեայ
խմաստարի Վեցորեայ:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Ի Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Առաջին արի

ԹԻԻ 1

15 Ապրիլ 1890

ՊԱՏՃԱՌՔ ՊԱՏԿԵՐ ՀԱՆԴԻՍԻՍ

Ապրիլ՝ բառին բովանդակ բարձր նշանակութեամբ, ճանաչել զանցեալն և զներկայ, քննադատութեան բուրա-
յէն անցունել ինչ և իցէ դէպք և խնդիր, բացայայտ տես-
նելու համար նոցուն ճիշդ կերպարանքը, սքանչացմամբ
հետեւիլ այնպիսեաց՝ որոց խորհրդովք և երկամբք ճշմար-
տապէս մեծ հանդիսացած են ազգք և ժողովուրդք, որ
ըստ օրէ տւելի հետազօտել երկրիս ընդերքը, զերել բնու-
թեան ոյժերը և օգտակար ընել զայնս, սիրիլ յընդհա-
նուր աշխարհ 'ի նպատտ մարդկութեան խաւարասոյց մի
մեծ մասին, համառօտ ըսել՝ վարել կեանք բանական և
ընկերական, ըստ կարելոյն բարեբաւստ, 'ի ձեռն ուղիղ
սկզբանց, ուսմանց և արուեստից, զիմեղով անդադար 'ի
կէտ վեհագոյն ապագայի, այս է անտարակոյս բաղաբակիրձ
դարձումս ընդհանուր ոգին և գործ, վերջին կէտին մէջ մասնա-
ւանդ, 'ի բաց առեալ մասնական շեղմունք և զեղծմունք։
Եւ մինչ այսպէս հսկայաբալլ կը յառաջադիմէ մարդ-

կումբին և իւր յաղթանակի կառաց պարծանքն են նորանոր հանճարեղաց անուններ և գիւտեր, երբ ուսումնական և գրագիտական ընկերակցութիւնք և գումարմունք հետզհետէ կարեւորագոյն ևս կը համարուին մարդուս համար, և դահլճաց և դարպասուց մէջ նոցուն Նրկքն, Պրակք և Ժողովածոյք՝ արդիւնք մեղուաջան աշխատութեանց՝ իբր գեղեցկագոյն զարդք կը փայլին, — յորս ըստ իմիք կը պատկերի մարդկութիւն 'ի մանրանկարի իւր կատարելութեամբքն և զանազան կերպարանափոխութեամբք, ինչպէս նաեւ տիեզերք՝ իւր անթիւ բայց 'ի մի կեդրոն և միութիւն դիմող երեւութիւքն և օրինօք, և ուր բղխմունք և հրաշակերտք գերահանճար մտաց և զգացմանց կը սքանչացունեն և կը յափշտակեն զհոգի և զսիրտ առ գերազանցականն, — բնական զգացումն է ամեն բանասէր անձի և կիրթ ընկերութեան համար ճայնակցիլ այս գեղայարմար բարոյական դաշնակութեան, կցորդիլ այլոց բանիւ և զրով, և բխրութ օգտուելուն ժամանակ 'ի մտաւորական հոսանաց յառաջընթաց եւ ժամանակակից մարդկութեան, իւր ալ սրտի և մտաց զգացմունքն և թրծումունք, որչափ ալ դոյզն ինչ, լսեցունել և ցոյցացունել գիտութեան սեղանոյ վառարանին վերայ, յօգուտ անձին և հասարակաց:

Այս է ահա որ կը յորդորէ զմեզ 'ի խմբագրութիւն առաջիկայ Պատկեր Հանդիսիս, շատ տարուան մեր իղձն ու փափաք՝ գործ ընելու իրապէս նպատաւանաւորց գտնելով ժամանակիս հանգամանքն • մանաւանդ որ այնպիսի Օգոստոսիսու Ինքնակալի հովանւոյն ներքեւ կ'ապրիմք, ինչպէս է մեր վեհափառ Սուլթան Ապաիւլ Համիտ Բ. Կալարն, որ Իւր մեծազօր Գահուն ամբողջակից ըրած է զիմաստութիւն, և թագին առաջին զարդն և ամբութիւն կը համարի զնոյն • որ պետական անբաւ հոգոց և զբաղմանց մէջ, ղեակ 'ի ձեռին վարելով զամենայն մեծաւ ա-

չալրջութեամբ, բնատուր տաղանդովն և զգօնութեամբ 'ի խաղաղութեան կը պահէ զթուրքիս և զէւրոպէ համօրէն, և Իւր սրտին լուսառատ ճառագայթացումը կը տարածէ մինչև ցվերջին խորշ և անկիւն Իւր լայնասփիւռ Պետութեան, և ամենուրեք կը յարուցանէ և կը բարգաւաճեցունէ դպրոցներ, վարժարաններ և լիկէոններ ազգի ազգի ուսմանց և զեղարուեստից. ինչպէս որ բարձրաքարոզ վկայք են այսմ ոչ միայն Իւր ժողովրդոց սրտագեղ շնորհակալեաց անընդհատ ցոյցերն և իղձք վասն երկարութեան Իւր Թանկագին կենաց, այլ նաեւ օտարազգի ողջամիտ լրագրաց և հանդիսից էջերն, որք մեծաւ զովեստիւք և զմայլմամբ կը խօսին մեր հայրախնամ Ինքնակալին մատուորական մեծ կարողութեան և սրտին վսեմ զգացմանց վերայ, և կը մաղթեն եռանդագին երջանկալիւ տարեաց անվերջ շրջան, Իւր կենաց և բարօրութեան հետ զուգեալ տեսնելով համօրէն թուրքիոյ և նորուն հպատակ ժողովրդոց բաղդն ու երջանկութիւնը:

Իսոյն կը խրախուսէ զմեզ նաեւ մեր արժանընտիր և արդարեւ իսկ իմաստուն Հովիւ մ'ունենալն, այն ինքն է Ամենապատիւ Գերերջ. Ստեփանոս Պետրոս Ժ. Ագարեան, Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ, որ իւր վերայ բովանդակած է այնչափ բազմապիսի յատկութիւնք քաջ վարչի և առաջնորդի, զոր դժուարին է գտնել ստէպ նաեւ 'ի շարս պատմութեան այլ եւ այլ ազգաց. որոյ միութեան և սիրոյ յօդակապ ըլլալուն մեծ արդեանց հետ՝ նաեւ ուղիղ դատիարակութեան և ուսմանց և արտաքին և տոհմային դպրութեանց նրջափ եռանդուն սիրող և քաջալերիչ ըլլալուն յայտնի հաւատալիք են, Թողլով զայլս, աստ 'ի Կ. Պօլիս իւր անխոնջ յանձանձանօք կառուցուած Անարատ Յղութեան Տիրամօր նուիրեալ Կուսաստանք և Օրիորդաց վարժարանք, և քանի մ'ամսէ 'ի վեր բացուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուանեալ բարձր Ռատմասրանք ազգային

պատանեաց համար, Բարիգու Ս. Ստանիսլաս վարժարանին ծրագրին համեմատ:

Սակայն այսու ամենայնիւ կը խոստովանիմք թէ շատ դժուարին և տագնապող է մեր առաջնդեալ գործն, 'ի մէջ այլոց նաեւ դարուս մասնական ձգտման և ընթացքին պատճառաւ, զոր նշանակեցինք 'ի վերոյ. որ ուսումնականութիւնը և գրագիտութիւնը անարգել ազատականութեան մէջ կ'ուզէ բմբռնել, ինքնակամ տեսութեան կէտով, և նորութեան ծայրայեղ սիրով կը խորշի յամենայնէ, որ օրինաւորութեան և վաւերականութեան ձեւին ներքեւ հնութեան դրոշմ մ'ունի. այլ գործակցելով 'ի մայրաքաղաքիս և արտաքոյ հրատարակեալ նախընթաց Հանդիսից և պարբերականաց ոմանց, որք շատ տարիներէ հետէ լուսափայլ կերպիւ կը գծեն իրենց օգտաւէտ շրջանը, և մատնանիշ կ'ընեն իմաստութեան անաղօտ լոյսը, և զայն որ ճշմարտապէս ընտիր է՝ բարի և գեղեցիկ, կը թեւակոխեմք քաջայոյս յապարէզ:

Կը սկսի ուրեմն Պատկեր ուսումնասերքս կաթողիկէ Հայոց Պատրիարքական բարձր հովանաւորութեան ներքեւ ձեռնամուխ ըլլալ 'ի գործ, ջանալով իբրեւ ճշգրտատիպ նմանահան պատկերագիր հանդիսանալ Գիտութեանց, Գրչութեանց և աշխարհաշէն անձանց և գործոց, և նախ առաջին հիմն և ուղղութեան կանոն կը դնէ իրեն կաթողիկէ կրօնից վարդապետութեան և բարոյականին հետեւիլ ըստ ամենայնի: Ըստ այսմ նաեւ ոգով չափ յարեալ և սիրող պիտի փայլի միշտ Օսմանեան Կայսերական պետութեան, իբրեւ հաւատարիմ հպատակ և լիովի վայելող նորուն ինամոց և բարութեանց:

Իսկ մանրամասանց իջնելով կ'ըսեմք՝ Թէ Պատկեր պիտի ճառէ բարոյագիտութեան, Սուրբ Գրոց և Սուրբ Հարց մեկնաբանութեան, եկեղեցական արարողութեանց և ազգային ծիսից, փիլիսոփայական դրութեանց և նոցուն

հետեւ ու թեանց վերայ, նկատմամբ Աստուածային յայտնութեան, որպէս նաեւ իրաւագիտական և անտեսագիտական և մանկավարժական խնդրոց, օտար և տոհմային պատմաքննութեանց վերայ: Պատկեր մեծ մաս մ'ալ պիտի նուիրէ մատենագրական, հնախօսական, բանասիրական, լեզուագիտական, և քննադատական երկասիրութեանց, և ի մասնաւորի՝ պիտի ճառէ ոչ միայն ճիշդ և բնական գիտութեանց օրէնքն աւանդող երկոց, այլ նաեւ աշխարհագիտաց ուղեւորութեանց և խուզախնդրութեանց և նորանոր գիտից վերայ: Մաս մ'ալ պիտի յատկացուի գեղարուեստից, որպիսիք են երգ և երաժշտութիւն, նկարչութիւն, արձանագործութիւն և ճարտարապետութիւն:

Դիտմամբ ընդարձակ բռնած եմք մեր ծրագիրը, հրաւեր կարդալու համար մերագնեայ ամեն կարգի բանասիրաց, որք կրնամք բարձրաբարբառ վկայել թէ սակաւամիւ չեն ըստ այլ եւ այլ ճիւղի և տեսակի, մխիթարական արդիւնք վարժարանաց և դաստիարակութեան, պատուելու մեր Հանդէսը իրենց հմուտից և կիրթ ճաշակի ընտիր գրութեամբք, զորս պատրաստ եմք յօժարակամ հրատարակել, եթէ չհակասուակին իւրք մեր գծած սահմանին:

Մեր ազգին մէջ այսպէս հետզհետէ աւելցած ուսումնականութիւնն և նաեւ ընտանեկան ընթերցասիրութեան եռանդն մեծապէս կը յուսացնէ զմեզ սիրալիր և քաջալերիչ ընդունելութիւն գտնել, մանաւանդ որ Պատկեր պիտի ջանայ ըստ մասին յատուկ և նոր ոճով, ինչպէս իւր ծրագրէն կ'երեւի, գոնեա տերեւ մի աւելցունել ազգային արդի գրագիտական ծաղկափունջին վերայ:

Խմբագրութիւն Հանդիսիս

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԵՒ ԵՐԿՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍԵԱՅ ԱՂԱԻՆԻՆ

Ջրհեղեղի վրայ Սուրբ Գրոց մեկնչաց մէջ գիտական սխալմունք մը սարդած է, զոր գրեթէ ամենքն ալ ընդունած կ'երեւին եւ այլոյ ալ կ'աւանդեն։ Արդարեւ մանր պարագայի մը կը պատկանի խնդիրը, բայց՝ բոտ մեր կարծեաց՝ մեծ կարեւորութիւն ունի։

Յայտնի է թէ՛ Սուրբ Գրոց համեմատ Նոյ Ջրհեղեղէն վերջը ջրոց ո՛ր տատիճան գտնուիլն հասկնալու համար նախ ազաւա մը արձակեց Տապանէն, եւ անոր ետեւէն ազաւնի մը, որ երկրորդ վտրձէ մը յետոյ Տապանը դարձաւ բերանը դալար ձիթենւոյ չիղ մը ունելով։ Արդ այս ձիթենւոյ չիղը եթէ ոչ ամենուն զէթ չատերուն մոտատանջութիւն կը պատճառէ։

Արդէն Դուռնըփօր գիտունը այս ձիթենւոյ չիղն դէմ առարկութիւն հանած էր։ Ինքն տեսած էր ի Հայտրնակ դաւառոս գեղեցիկ վայր մը զոր Դրախտաւայր ըլլալու արժանի կը համարէր, եւ ուր գեղեցիկ այգեստաններ կը գտնուէին, բայց ամենեւին ձիթենի չկար։ Ուստի չէր կարող մեկնել, թէ Նոյեան ազաւնին ո՞ւր գտած էր ձիթենւոյ դալար չիւղը, քանզի ձիթենին անմեղուկ է կ'ըսէ, այսինքն անթառամելի, եւ Նոյն կողմերը չի մշակուիր։

Սուրբ Գրոց հակառակորդք կարծէին մեծ առարկութիւն մը յառաջ բերել տալի, եւ մինչեւ իսկ Մովսէսեան պատմագրութիւնը ծաղրել կը յանդգնէին. ընդ հակառակն ողջամիտք ոմանք այս առարկութենէ խուսափելու համար մտաբերեցին Նոյեան Տապանի ուրիշ աւելի բարեխառն երկրի մէջ լեռ մը յատկացնել, ուր ձիթատանք գտնուին, բայց այսու Մատեաց Աղաւնոյն գտած չիղը մեկնելու համար Սուրբ Գրոց պատմական մեկնութիւնը խեղաթիւրեցին։

Արդ՝ այժմեան հնադիտական, բնախօսական եւ երկ-

բաբանական գիտութեանց յառաջադէմ գննութիւններէն
գիւրին է ի սպառ հերքել այդ առարկութիւնը , եւ ըսել որ
եթէ Դուռնը՛օր գիտունը , ձիթենի չէր տեսած անդ
այլ միայն այդի , Սարապոն իրմէ առաջ հակառակը տեսած
էր , եւ հիմա ալ Մսկաց եւ Տայոց գաւառներուն մէջ՝ տեղ
տեղ ձիթենին կը մշակուի , եւ նոյն խոյ թորթումի մէջ՝ ուր
տաք գաւառներու գրեթէ ամէն տեսակ արմովք կը բուս-
նին , ձիթենւոյն մշակութեան կարելիութիւնը շատ հաւա-
նական է : Բայց այդ ալ կրնայ ըսուիլ թէ ժամանակը կա-
րողացած է փճացնել այդ ծառատունկը , ինչպէս ուրիշ
շատ տեղեր ըստմութիւ եւ բազմատեսակ ծառատունկեր
անհետ եղած են , կամ թէ՛ ինչպէս Տիտոս Հրէաստանի մէջ
բնաջինջ ըրած էր ձիթատանները , գուցէ ուրիշ Տիտոս
մ'ալ նոյնպէս ըրած էր այն կողմերը :

Կրնայ նաեւ պատասխանուիլ թէ ջրհեղեղէն յետոյ հը-
նար չէր եղած ձիթենին մշակել անդ , կլիմային կրած
փոփոխութեան համար : ուստի ջրերուն քաշուելու ատեն
ձիթենւոյ մնացորդ մը գտնուած էր լերան վրայ , որ յետոյ
ցրտանալով մշտատեւ ձիւներէ պատեալ մնացած էր : Մին-
չեւ ցարդ չէ ստացուցեալ թէ ջրհեղեղն երկրազնդոյս
վրայ մեծ փոփոխութիւն մը պատճառած եւ մթնոլորտին
բնդհանուր վիճակը այլայլած չըլլայ , եւ հաւանական է որ
հակառակը օր մը պիտի ապացուցուի ամենայն հաստատու-
թեամբ :

Բայց կարելի է պատասխանել եւս թէ ձիթենին չէ
անձեռնդի , եւ այդ անուանումը գիտական յորջորջում մը
չէ ձիթենւոյն նկատմամբ : Այո՛ , ձիթենին շատ կենդանի
եւ ուժեղ ծառատունկ մ'է , եւ գրեթէ ամեն ծառէ աւե-
լի կը գիմանայ ծառերը փճացնող սովորական եւ անսովոր
պատճառաց , ո՛չ թէ իւր բնովն՝ այլ իւր արմատով : եւ յի-
րաւի իւր բունն չուտով կը փտտի եւ կոճղին վրայ փոսեր կը
բացուին ո՛ր եւ իցէ ուրիշ ծառերէ առաւել գիւրութեամբ ,
բայց իւր արմատն միշտ կենդանի եւ պինդ է , եւ որչափ եւս
իւր բունը կտրտած , ջախջախած եւ փտտած ըլլայ՝ արմա-
տը կը քաշէ իւր հոյզը եւ զայն գետնէն վեր կը մղէ , բաւա-
կան է , որ կտոր մը կեղեւ կոճղին մէկ մասին վրայ յարեալ
մնայ : Զիթենին թէպէտ մինչեւ ի գետին եւ գետնին տակ
եւս ջախջախած ըլլայ , կը բաւէ որ արմատէն կտոր մը

հողին մէջ մնացած ըլլայ, ճիւղ մը կ'արձակէ, ոտտ կ'ըլլայ եւ յետոյ ծառատունկ, եթէ իւր ճիւղերն ուրիշ պատճառներէ անդադար չի փճանան: Այս խմատով է որ ձիթենին անմեռուկ ըսուած է, այսինքն թէ ջնջումը ամենաաղժուարին է: Եւ այս պատճառաւ ջրհեղեղի ատեն ուրիշ ամեն ծառատունկերէ պակաս մնասուած պիտի ըլլայ: Կաղնին, կնճին, կատանենին, եւն, փոթորիկէ մը կրնան տապալիլ: Ծառն որչափ ուժեղ ըլլայ, այնչափ հողերու ստատկութեան կ'ընդգլխանայ, բայց եթէ այդ ստատկութիւնն յարատեւէ, վերջապէս կը տապալի եւ իւր արմատներուն մէկ մասը ի միտսին կը խլէ, իսկ միւս մասը կը փրշրի: Ընդհակառակն, ձիթենւոյն ձողը կարճ է եւ կոճղին ստորին կողմը ստուար, եւ որչափ հինաւուրց է, այնչափ բունն ներքուստ փափուկ է: Վասն որոյ փոթորիկն չի կրնար զայն խլել, այլ կրնայ ջախջախել, որով ստերուն բեկորքը ցիրուցան կ'ըլլան հովուն զօրութեամբ, բայց իւր արմատն որչափ եւս սարսած ըլլայ եւ խախտած, փոթորիկն անցնելէ յետոյ, դարձեալ հոյզը արտադրելու ուժը չի կորսնցնէր: Ջրհեղեղի ատեն հեղեղք երկրիս վրայ տարուբերելով, եւ հողերն տակն ու վրայ ընելով՝ անտարակոյս կաղնին արմատն խլած ու մղած են, բայց ձիթենւոյն արմատը հողին տակ մնալով բաւական տարր պահած է նորէն բուսնելու:

Ահա այսպէս Նոյեան Աղաւնին ջուրերը քաշուելէ քանի մը շաբաթ յետոյ, կարող եղաւ յաւէտ ձիթենւոյ դաւար շիղ մը գտնել քան թէ այլ ծառատունկի մը ոտտ: Այդ փոքր դէպքն զոր Սուրբ Գիւրք կը պատմեն, ոչ միայն դրժողարութեան եւ աւարկութեանց աւելթ չըլլար, այլ մանաւանդ թէ կը ծառայէ պատմութեան ճշմարտութեան, եւ կը հաւաստէ Մովսիսի դրութիւնը: Այս ատպոյցոյցս, ա'յնչափ պայծառ է, որչափ ամենապարզ դէպքէ մը յառաջ կուգայ: Սուրբ Գրոց այն քանի մը համառօտ խօսքն ըստ ամենայնի համաձայն են այժմեան բուսաբանութեան, բնախօսութեան եւ թռչնաբանութեան նկատմամբ եղած վերջին գիտնական զննութեանց եւ փորձերու:

Վասն որոյ զարմանք է տեսնել թէ Մատեաց Աղաւնոյն շիղը մեկնելու համար շատերն այլ եւ այլ անընդունելի եւ գիտութեան հակառակ դրութեանց գլխած են:

Մեկնութիւնը ամենապարզ է . Նոյեան աղաւնին՝ որուն ծառայութեան կտրեւորութիւնը Նոյ հազար տարիներով առաջ ճանչցած էր , երկարատեւ բանտարկութենէ անտարակոյս ձանձրացած եւ բանտարկութեան մէջ դաւարիքէ բոլորովին զրկեալ , Նոյի ձեռքէն դուրս արձակուելուն պէս , ըստ բերելոյ բնութեանն դաւարիք փնտռած է , եւ ինչպէս ըսինք , դոտած առաջին դաւարը ձիթենեայ մնացորդ պղտիկ պտուկ կամ ծիւ մ'եղած է՝ զոր աղէկ մը կտցելէ եւ իւր քաղցը յագեցընելէ յետոյ , ուրախալից՝ չիլ մ'ալ իւր ընկերոջ տանելու դիտմամբ , կտուցն դաւարեաց մանրուքով լի Տապան դարձած է , ուր անտարակոյս իւր մոռաքն ուրախութեան առիթ եւ բերած մատաղ ծիլը խաղաղութեան տւեալեաց նշան ողջունուած է , եւ այսպէս Մասեաց Աղաւնոյն այս երթեւեկն եւ ձիթենեայ չղոյն յիշատակը յաղգէ յաղգ աւանդուելով , նոյն խիւ Մեքսիկոյի մէջ իբր խաղաղութեան նշան ըմբռնուած է :

Գոհ ըլլալու ենք որ Մասեացս Աղաւնին իւր սիրուն չղովը ալեւոր Նահապետին եւ ընտանեացն սիրտինք եւ մխիթարութիւն պատճառելէ յետոյ , սովորաբար կարծուածէն շատ աւելի բազմազէտ եւ շատ աւելի բազմաճմուռ անոր Պատմադրոյն գրչին եւ գրութեան ճշգրտութիւնը հաստատելու եւս կը ծառայէ :

Ծ Ի Մ Ա Վ Ա Ն

ՄԻԼԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ

ՅՈՅՆ ԾԻՍԻՑ ՆՇՄԱՐԱՆՔ

Միլանի Լատին եկեղեցին՝ որ իւր յատուկ Ամբրոսեան ծէսն ունի , թէ՛ եկեղեցական ժամակարգութեան եւ թէ՛ Պատարագի մէջ յոյն ծիսից նշանաւորքը կը սրահէ . այս անգամ միայն Պատարագ ամատուցի մէջ գտնուածներն յիշենք :

Նախ՝ յոյն ծիսի համեմատ Պատարագի զրքէն առաջ
Հին Կտակարանէն ընթերցուած մը կը կարդացուի :

Երկրորդ՝ « Փառք ի բարձունս » էն յետոյ , իսկոյն Պա-
տարագիչը երեք անգամ Κύριε ἐλέησον *ֆի'րիէ եղե'խօսն* (Տէր
ողորմեա) կ'ըսէ , առանց Χριστέ ἐλέησον *խրիստէ' եղե'խօսն*
(Քրիստոս ողորմեա) յաւելլոյ . այս երրակի *ֆի'րիէ եղե'խօսն*
յոյն Պատարագամատուցի համաձայն է :

Երրորդ՝ 'ի վերջ Աւետարանի ընթերցման եւ դարձեալ
երեք անգամ *ֆի'րիէ եղե'խօսն* ըսելէ յետոյ , կը յարէ , *Pacem*
habete թա'ջեմ հապե'թե , յոյն՝ εἰρήνη πᾶσι *իրի'նի թա'սի*
(խաղաղութիւն ամենեցուն) բառերը , եւ դասը կը պատաս-
խանէ յոյն ծիսի համեմատ , *Ad te Domine* աճ դէ so'միմե ,
յոյն σο' Κύριε « *սի ֆի'րիէ* » (քեզ Տէ'ր) ասելով :

Չորրորդ՝ 'ի Միլան՝ Պատարագիչն ընծայմանէ յետոյ ,
« Հաւատամքը » կը յարէ յոյն ծիսի համեմատ , եւ ոչ թէ Ա-
ւետարանի ընթերցմանէն վերջը , ինչպէս առ Լատինս եւ
առ մեզ :

Հինգերորդ՝ թէպէտեւ Կանոնը (Սրբադարձութեան
նախընթաց աղօթքն) Հռովմայ Եկեղեցւոյ Խորհրդատեարի
համեմատ է , բայց վերջաւորութիւնն յոյն Խորհրդատեարի
մէջ գտնուած աղօթից նմանութիւնն ունի :

Վեցերորդ՝ Սուրբ Նշխարքը բեկանելոյ տալէն , Սուրբ
Յովհան Ոսկերեարանի Պատարագամատուցի մէջ գտնուած
աղօթքը կը մատուցանէ :

Եօթներորդ՝ ճաշակմանէ յետոյ Քահանայն վերստին ե-
րեք անգամ *ֆի'րիէ եղե'խօսն* կ'ըսէ , որ յոյն Պատարագա-
մատուցի նման է , եւ Լատին Պատարագամատուցի մէջ չկայ :

Աւագ Հինգշարթի՝ Յոյն Եկեղեցին Սուրբ Բարսղի Պա-
տարագամատոյցը կը գործածէ , յորում Կանոնն աւելի ճոխ
է Ոսկերեարանի Պատարագամատուցին համեմատութեամբ :
Նոյնպէս Միլանի Եկեղեցին Աւագ Հինգշարթի օր երկայն
Կանոն մ'ունի , որ Հռովմական Պատարագամատուցի մէջ
չկայ :

Աւագ Հինգշարթի օր՝ նոյն օրինակ ճոխութիւն կը տես-
նուի Միլանի Եկեղեցւոյ գործածած Կանոնին մէջ . բայց ա-
ւելի մտադրութեան արժանի այն է , որ 'ի Միլան Պատա-
րագիչ Քահանայն Աւագ Շարթու Պատարագը սկսած ա-
տեն , յոյն ծիսի համեմատ երեք անգամ կը կրկնէ *Christus*

resurrexit Քրիստոս ընդհանրե'սխիս յոյն՝ Χριστός ἀνέστη
Խրիստոս'ս անե'սխիս, «Քրիստոս յարեալ» բառերը:

Բայ յայլ նմանութիւններէ, Մեծ Պահոյ Պատարագաց
սկիզբը Միլանի Եկեղեցին Ոսկերեանի Պատարագամատուցի
Համաձայն Մաղթանք մը կ'երգէ. նոյնպէս յոյն ծիսի Հա-
մեմատ Փառամնորդաց երկրորդ Կիրակին Սաւարացոյն,
երրորդը՝ Աքրահամն, չորրորդը՝ Կուրիւն, Հինգերորդը՝
Ղազարու կ'անուանէ:

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՕՐԷՆՔ

Ինչ որ առ Հատարակ օրէնք կը կոչուին, ոչ այլ ինչ են
եթէ ոչ մարդկային կանոնադրութիւն, օրէնքրի անցաւոր
գործ մը, որ ըստ բուն առման՝ օրէնքի էութիւնը չի պա-
րունակէր, վասն զի օրէնքի ոչ սկզբանց Հաստատութիւնը
ունի, ո'չ ձեւոց պարզութիւնը եւ ոչ գործոց յարատեւու-
թիւնը:

Ի մարդկութեան միայն երկու օրէնք կան, որ բուն օ-
րէնքի գաղափարն կը ներկայացնեն, Հաստատուն, պարզ եւ
անհրաժեշտ ըլլալով, եւ են՝ Բնական օրէնք, եւ Կրօնական
օրէնք. իսկ այս երկու օրինաց ժխտումն են Հակաստուա-
ծային օրէնք, որ ըստ բարոյագիտաց ամբարշտութեան օ-
րէնք կը կոչուի:

Բնական օրէնքն ամեն մարդոց խզճին մէջ միշտ կենդանի
է, ամեն քաղաքակրթեալ ազգաց մէջ մարթ է գայն գտնել,
գրեթէ մէկ մէկու Համաձայն բանաձեւերով նշանակեալ
ինչպէս են Կոնիուէկիտի առածք, եւ Երրայեցոց տասնա-
րանեայ պատուիրանք:

Կրօնական օրէնքն (ամփոփելով միայն մեր խօսքը Եւրո-

սոյցի վրայ իբր ամենէ աւելի տարածեալ քաղաքակրթութիւնը արտադրող) այսինքն Աւետարանական օրէնքն՝ բնական օրինաց լրումն է, զոր չ'այլայլեր, բայց անոր աւելի նուրբ եւ ազնիւ ոգի մը կ'ազդէ, որով իւր մերձեցուցման մէջ գրեթէ նոր իրաւագիտութիւն կամ օրէնադրութիւն մը յառաջ կը բերէ, եւ որ արդարութիւնը աշխարհիս վրայ կ'ազմակերպելէ յետոյ, սիրովն՝ զոր կ'ազդէ, մարդկութիւնը իւր յաւիտենական տալաքային կ'առաջնորդէ:

Իսկ հակասութեամբային օրէնքն հակառակն է, ոչ միայն Աւետարանական այլ եւ բնական օրինաց: Առաջինն կըսէ «Մի՛ սպանաներ, մի՛ գողանար», երկրորդը կ'ըսէ «Դու ընկերդ պիտի սիրես քեզի պէս»: Իսկ ամբարշտութեան օրէնքն կ'ըսէ, «Դու ընկերացդ հակառակ պիտի մաքառիս քու շահուդ համար, եւ պիտի ճոխանաս անոնց կողմաւորութիւնը»:

Մարդկութեան յեղափոխութեանց պատմութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ այս երկոյ օրինաց մէջ տեղի ունեցած մաքառման պատմութիւնը: Առաջնոյն (բնական օրինաց) պէտք է վերադրել Արեւելքի անփոփոխ քաղաքակրթութիւնները, երկրորդին (քրիստոնէական օրինաց) Արեւմտից հետզհետէ յառաջախաղաց քաղաքակրթութիւնը. երրորդին (հակասութեամբային օրինաց) բարբարոսաց վիճակը: Առաջնոյն հետեւութիւնն եղած է բնական առաքինութեանց եւ հայրենատուր աւանդութեանց պահպանութիւնը, երկրորդին դիւցազնական գլխաւորութեանց հանդէսը եւ խռովի պաշտօնը, իսկ երրորդին հետեւանքն՝ վայրենութիւն:

Վերջին երկու դարուս քաղաքագէտք ճշնեցան այս երեք օրէնքէն փոխառութիւններ ընկելով, խառն բարոյական մը կ'ազմել, եւ խառնակ քաղաքակրթութիւն մը ստեղծել, որոյ բանաձեւն, յեղափոխութեան ծնողաց քարոզած սկզբանց մէջ պարունակեալ է:

*



Տ Ա Ն Դ Է ^(*)

Մ Ա Ք Ի Ա Ր Ա Ն

Ե Ր Գ Ա Ռ Ա Զ Ի Ն

Ի նաւարկել ընդ բարեւունջ ջուրս արդ ուրեմն
Ըգրընչարանսն 'ի վեր պարզէ հանճարոյս կուր ,
Ի քիկանց իւրոց բովեալ ծով ժանճածուս :

(*) Զկայ գիրք մի, կ'ըսուի, որոյ վերայ Ս. Գրքէն յետոյ այնչափ գրուած եւ խօսուած ըլլայ զովեւս՝ քննադատութիւն՝ մեկնութիւն եւ այլն, ինչպէս է Տանդէի Խաղ (Commedia) անուանեալ քերթուածն, զոր ժամանակակիցք իւր Խաղ Աստուածային հռչակեցին: Նորուն այլեւայլ մասանց վերայ եղած ուսմունք եւ քննութիւնք, մանաւանդ Մաքսառան կոչուած մասին վերայ, օր ըստ օրէ կ'աւելնան այս դարուս եւ այս տարեաց մէջ ամեն ժամանակէ աւելի, գլխաւորապէս 'ի Գերմանիա, իւր մէջ բովանդակելուն համար շատ բարձր փիլիսոփայական թըռիչք եւ նուրբ խորհրդածութիւնք ըստ Ս. Թովմայի Ազուինացւոյ գրութեան, խառն ընդ այլաբանական՝ պոսմական եւ նկարագրական մասանց, զորս 'ի մի հիշատած է քերթողն հանճարեղ ճարտարութեամբ, տալով քերթուածին երփնազարդ եւ գերաւորանշ վայելչութիւն :

Մեր մեծ կողապարագ վերայ ծուլել փափարքելով մեր ազգային պատանեաց եւ երիտասարդաց միտքը, որք վառվառն երեւակայութեամբ եւ նորութեան բերմամբ յոյժ սիրող են բանաստեղծական եւ վիպասանական գրութեանց, մտադիր եւ շնորհակալութեամբ կ'ընդունիրմք 'ի վեհագոյն իշխանութենէ եւ 'ի մեծանուն գրագիտաց առ մեզ եղած յորդորն ու հրաւէր, հրատարակելու քանի մի հասփնսիր մասեր անմահական քերթուածիս մեր այլեւայլ տարեաց ընթացից մէջ ըրած ամբողջական ծարգմանութենէն. եւ առ այժմ 'ի լոյս կու տամք Մաքսառանի սկիզբը, Նախամաքսառան եւ կամ Արտաքին Մաքսառան (Antipurgatorio) կոչուածը, հայկական հին ճաղաչափութեամբ, շեշտից եւ հանգիստներու միտք ղենլով յասկապէս, միայն քառանդամը եռանդամի վերածելով, ըստ մեր կանխաւ ըրած ուրիշ հրատարակութեանց, քերթողին իմաստից տուները եւ տղերքը առանց խեղամիւրելու եւ կամակորելու՝ իւր ծուլած եւ ներկայացուցած ձեւին մէջ պահելու համար :

Եւ առից երգել գերկորդըն պետութիւն ,
 Ուրանօր հոգի մարդոյն մաքազարդեալ
 Եւ արժանի լինի յերկինս ամբառնալոյ :
 Այլ մեռեալն աս յարիցէ ֆերթուրիւն ,
 Ո՛ր Մուսայֆ սըբանըւէրֆ , զի ձեր եմ ես .
 Եւ աս 'ի վեր դոյզն ամբարձցի Կալիօպէ ,
 Միաբանեալ երգոցս իմոց հընչմամբն այնու ,
 Ռուվ Անծեղբն եղկելիֆ հարուածեցա՛ն
 Այնպէս ուժգին՝ զի ընդ ներուսն եղեն անյոյս :

Երբն անոյշ արեւելեան շափիւղայի
 Գումարելով 'ի դէմքս զուարթ պայծառափայլ
 Երբերին՝ մինչ ցառաջինըն պարունակ ,
 Վերբսին յաչս իմ ծագեաց ըզըրնծութիւն
 Իրբեւ ելի արտաքս ըստ օդըն մահառունչ ,
 Որ վարակեալ էր զրսմութեամբ զաչս եւ ըզլանջս :
 Մոլորականըն գեղեցիկ սիրայորդոր
 Զարեւելս ողջոյն առնէր գեղածիծաղ ,
 Ըստդեալ յառաջընթաց իւր ըզՁըկունս :
 Յաջակույմըն կոյս դարձայ ուշիւ դիտել
 Ըզլիւս բեւեռն , եւ ասեղֆ չորֆ յակն իմ անկան ,
 Ի նախահարցըն առաջնոց միայն տեսեալֆ :
 Զուարճանալ բուէին երկինֆ իւրեանցն 'ի փայլ :
 Վա՛յ քեզ նահանգդ հիւսիսային այրիացեալ ,
 Քափուր գոլով քո յայնոցիկ տեսութենէ :
 Ա՛յն ինչ մեկնեալ իմ 'ի նոցուն հայեցուածոյ ,
 Սակաւիկ ինչ դառնալով առ միւս բեւեռն ,
 Ուստի եղեալ էր արդէն Սալլն աներեւոյթ ,
 Ըզծերունի ոք միայնակ տեսի ինձ մօտ
 Արժանի մեծարանաց յոյժ առաւել՝
 Քան որչափ ոչ պարտիցի որդի առ հաբն :
 Երկայնածիւզ մօրուսն էին սպիտակախառն
 Ընդ ալիս , հանգունասիւ պարսից իւրոց
 Մինչեւ 'ի կուրծսըն ծաւալեալ 'ի կըրկին ջոկս :
 Զառագայթֆ սըբամաֆուր փառեալ լուսոյն
 Գեղերֆնէին այնպէս ըզդէմըն լուսազարդ՝
 Զի դիտէի զո՛գ զարեգակն 'ի հանդիպոջ :
 Ո՞ր էֆ դուք , որ կոյր գետոյն ընդդիմադարձֆ

Ի բանէն յաւիտենից կայք փախուցեալ,
Եհարց նա, զպարկեօս ալիսրն շարժելով:
Ո՞վ ոք եղեւ ձեզ առաջնորդ կամ լուսասու,
Յեղանել 'ի գիշերոյն խորոց արտաւ,
Որ սեւաքոյր յաւէս գործէ զձոր դրժոխոց:
Երգեցա՞ն այսպէս օրէնքն անդրնդային,
Կամ թէ կալեա՞լ եղեւ խորհուրդ նոր 'ի յերկինս,
Զի 'ի քաւայս եկաւորիք դասապարտեալք:
Անդ կալաւ զիս 'ի պահուն Առաջնորդն իմ
Եւ ձեռամբ եւ բարբառով եւ նրբանօք
Պատկառոտս արար ըզբունս եւ զհայեցուածս:
Ապա՝ Ո՛չ ինձէն եկի, ասաց ցլնա.
Էջ յերկնից ոք տիրուի, ոյր աղերսիւք
Այցելու եղէ սրմին յուղեկցութիւն:
Այլ զի կամք եմ քո գիտել ե՛ւս յայտնութեամբ
Ռզպայմանէս ըզհաւաստին նըշմարտութիւն,
Զէ ինչ մարք թէ քոյունդ ի՛մս ընդդիմասցի:
Սորա չի՛ք բնաւ գերեկոյն վերջին տեսալ,
Այլ այնպէս մօտ եկաց նրմին շամբուռ մըտօ՝
Զի փոքր մի եւ կատարած էր շրջանին:
Ի փրկութիւն առաքեցայ, զորօրինակ
Արդ ասացիս. եւ ոչ գոյր ա՛յլ ինչ հանապարհ
Քան ըզտոյն՝ յոր նրկրտեալս եմ միջամուխ:
ուցի սրմա ըզբովանդակ որեարն ժանս,
Եւ արդ զոգիսն 'ի մէի եղեալ եմ ցուցանել,
Որք ընդ քոյով իշխանութեամբ մաքրեն զանձինս:
Զի՛ք իցէ պատմել թէ ի՛քր ամի ըզնա.
Իջանէ յօգն 'ի վերուս ինձ զօրութիւն
Առ 'ի վարել զինքն 'ի տեսիլ քո եւ 'ի լուր:
Ո՛ն, աղէ՛, հանոյ գալուս իւր քեզ լիցի.
Գնայ 'ի խընդիր սիրտեցնակն ազատութեան,
Որպէս գիտէ որ 'դ այն յուրաս կայն 'ի կենաց:
Դիտես դու զայդ, զի քեզ չեղեւ դառն յուսիկէ
Վասն այնքր ման. յորում տեղոյ թողեր զըզգեսն,
Որ լուսափայլ պայծառասցի 'մեծի աւուրն:
Ոչ եմ պատգամքն յաւերժական եղծեալ ինչ մեօք.
Զի սա կեայ, եւ զիս Մինովս ոչ պարուրէ,
Այլ ես կամ 'ի շրջանին, ուր եմ անբիծ

Աչք փոյդ Մարտեայ, որ դեռ 'ի քէն քըւի հայցել,
 Ո՛ր սուրբ լանջք, զի իբր ըզփոյդ զինքն կայցիս :
 Հա՛պա առ սէր նորուն ալէ՛ զիջիր քնդ մեզ :
 Թո՛ղ երթամք ընդ փոյ եօթնեակ իշխանութիւնս,
 Զերախսիս քն պատմեցից ես առ նըմին,
 Թէ ոչ խոսես ածիլ 'ի յուշ այդր 'ի սոսր :
 Այնպէս եղեւ սիրելի յաչս իմ Մարտիա
 Մինչ էի ես յանսի կեանս, յաւել յայնժամ,
 Զի զի՛նչ եւ շնորհ խընդրեաց յինէն՝ ոչ զըլացայ :
 Արդ զի յա՛յնկոյս քան ըզչար գեհն օրագանի,
 Ո՛չ եւս այլ կարէ յուզել զիս, ըստ տուելոյ
 Օրինաց ընդ ելանելս անսի արտաք :
 Այլ քէ բամբիւն երկնից դրդեալ ըզքեզ վարէ,
 Ի՛րպէս ասեսդ, ո՛չ ինչ պիտոյ եմ ողորմանի .
 Աղերսելոյ յանուն իւր՝ շա՛տ լիցի լիով :
 Ե՛րբ ուրեմն, եւ շուրջ պատեալ ըզսա յողորկ
 Ի կընիւն, եւ լըւացես զերեսըս իւր,
 Մինչեւ ոչ մընալ 'ի նմա աղոյ իմիք :
 Քանզի չէ ինչ վայելուչ մառախլապատ
 Պըզսոր աջօք կալ առաջի նախապատիւ
 Պատշոնէին, որ է բընակ Արքայութեան :
 Շուրջանակի ըզկըզգեկաւ՝ հուսկ 'ի սպառուածս
 Անդ 'ի խոնարհ, ուր կոհակք ջուրց քան անկանին,
 Ի վերայ կակուղ տըլմայ անէ կընիւն :
 Ոչ է մարք քէ անդանօր սընանիցի
 Տունկ ինչ այլ տերեւալից կամ կարծրակուռ,
 Որ ոչ բեկանիցի 'ի ծըփանաց :
 Ի վերջէ ոչ արացես դարձ ընդ տեղիս,
 Յուցանիցէ քեզ արեգակըն նորածին
 Ամբառնալ 'ի լեառքն բարձր ընդ դիւր վերելս :
 Ընդ բանին եղեւ անհետ. եւ ես յոտին
 Կացի անխօս եւ առ իշխանն իմ մերձեցայ
 Ամենեւին, զաչկուես առ ինքն ուղեւեղելով :
 Ե՛ս՝ Որդեակ, ե՛կ ըզկընի իմ, ա՛ռ ասել .
 Յեքս դարձցուք, զի դիւրս աստուս 'ի տեղոջէս
 Է դարավէժ 'ի զիշագոյն իւր ըսպառուածս :
 Աւալուրէ վանէր ըզպահ առաստուն
 Հալածական իւր առաջի, եւ անա վէժ

Ի հեռուս ծովուն ալեաց յակն իմ անկան :
Երբայաք ընդ անմարդի մարգագետինն ,
Ձոր օրինակ ոք դառնայցէ յուղւոյն մոլար
Եւ չեւ յըսոյցն հասեալ կարծէ գրեալ 'ի գուր :
Իբրեւ եղաք անդ՝ ուրանօր ցօլ հանդուրծէ
Արեգական , եւ հովանուս առնոցի
Գոլով վայրացն անագանի անօտանալ ,
Ձերկոսին ձեռսն 'ի վերայ խոտոյն կարկառ
Ձրգեաց Իշխանն իմ մեղմագին . յորմէ եւ ես
Խելամուտ եղեալ միսացքն խորհրդոց ,
Մասուցի առ նա զերեսս արտասուագին :
Անդ յայնժամ 'ի բաց հեան իսպառքսգուռ
Ըզմրբարըն զոր մածոյց զինեւ դլծոխք :
Ապա եկաք 'ի ծովափունսն ամայաքնակ ,
Որ չեսես զոք ընդ ալիսն երբեք նաւել
Ձի իցէ եղեալ հրմուտ անդրէն 'ի դարձ :
Անդ արար զիս գօշւալինդ քս այլոյ կամս :
Ո՛րվ մեծամեծաւ բսփանչելիք . զի զոր բնօրեաց
Տունկ ցածուն , ծրնաւ դարձեալ նոյնպէս ընդ հուպ
Ի տեղւոյն՝ ուսի խլլեալ էր բնշովին :

Թարգմանեաց

Հ. ԴԱԻԹ Վ. ՆԱՋԱՐԵԹԵԱՆ

ՆԵՋՈՒՍԳԻՏԱԿԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՊԷՏԲ ՈՒՆԻ

Գրաբարեանց եւ Աշխարհաբարեանց վեճք մոռցուելու
չափ հինցած չէ : Այն կարեւոր խնդիրն որ յուզուեցաւ եր-
բեմն՝ մեր գրականութեան կրնար մեծ ծառայութիւն ընել՝
արդի մատենագրութեան հաստատութիւն ու միօրինակու-

Թիւն տալու մասին, եթէ ըստ օրինի ըլլար վէճն ու արգիւնքի մը յանգէր, որ սակայն ապարդիւն մնայ: Ինչպէս մեր ամէն ձեռնարկութիւններն, նոյնպէս այն լեզուատալայքարն որոշ ելք մը չունեցաւ, յանկարծ դադրեցաւ, կարող չեղանք որոշել թէ ո՛ր կողմն իրաւունք ունէր, իւրաքանչիւր կողմնակցութեան ի՛նչ էր նպատակն: Հակառակ կուսակցութիւնք իրենց սեպհականեցին յաղթութիւնն ու պատերազմն անպարտելի մնաց: Յարդ կը պնդեն ու կը ճգնին Գրաբարեանք որ աշխարհաբարը ասկաւ գործածութեանէ ելլէ, ապրելէ դադրի եւ գրաբարը դարձեալ կենաց կոչուի, մինչդեռ Աշխարհաբարեանք ուժգին կը հակառակին հնօրեայ մեռեալը գերեզմանէ հանելու: Թէ մեր ըսածն երեւակայութիւն չէ՝ ապացոյց մըն են արդի գրութիւնք, որոնց մէջ այդ երկու ներհակ ուղղութիւնք ակնհայտ կ'երեւին: Սակայն այս տարտամ վիճակն, ո՞վ կրնայ ուրանալ, թէ վնասակար է մեր գրական յառաջադիմութեան: Ո՞վ չիտեսներ թէ այս եղանակաւ մեր գրաւոր լեզուն երբեք պիտի չկարենայ կայուն վիճակ մը ստանալ, որոշ կերպարանք առնուլ. իսկ այս անկայուն եւ անկերպարան լեզուն վկայ պիտի չըլլա՞յ միշտ մեր թշուառ կացութեան. ո՞չ ապաքէն գիտութեանց եւ արուեստից մէջ անհնարին է յառաջադիմութիւն ու բարգաւաճանք, առանց լեզուի միօրինակութեան ու միութեան, որ միայն կարող է գործող գրական ոյժերն արդիւնաւոր ընել: Մեր ազգային երկպառակ ոգին որ յաճախ միաբան գործունէութեանէ զրկած է զմեզ եւ երբեմն նոյն իսկ անգործութեան դատապարտած, նաեւ գրականապէս կը պառակտէ զմեզ. այնպէս որ՝ թէեւ ունենանք բաւական հարուստ արդի մատենագրութիւն մը, լեզունիս տկար, ուստի եւ անկարող կը մնայ միշտ՝ համերաշխ ընթանալու այն կրթական յառաջադիմութեան հետ, որով եւրոպաբնակ ազգերն իրաւամբ եւ արդեանամբ կը ծաղկին ու կը բարգաւաճին՝ մանաւանդ իրենց գրաւոր պնդակազմ լեզուին շնորհիւ: Ուստի եւ մենք լեզուի խնդիրն յուզելով վերստին՝ կը դիտենք ազգիս գրագիտաց ուղադրութիւնն հրաւիրել մեր այժմ խօսած, նա մանաւանդ գրած հայերէն լեզուին նորոգութեան կամ միութեան մասին: Ունենանք լեզու մը, զոր ամէն հայ մարդ միօրինակ եթէ ոչ խօսի, գոնէ գրէ եւ զայն զօրացնենք

այն աստիճան ըստ ճշտութեան ելլելու, ուր հասած են դարուս գիտութիւններն ու արուեստներն:

Սակայն այս գիտարին գործը կատարելու կա՞նալաւորութիւն: Այս նկատմամբ եւ ոչ վայրկեան մը երկրայելու իրաւունք ունինք, թէպէտեւ չկարենանք գիտարութիւններն ալ ծածկել: Խրախոյս առնունք նկատելով եւրոպիոյ կատարելագոյն լեզուաց արդի եւ վաղեմի միւճակներն որոնք իրարմէ չատ տարբեր էին, ինչպէս գրականութեան պատմութիւնը կը վկայէ: Ասոնք ալ երբեմն մերինին պէս եւ թերեւս աւելի խեղճ էին եւ արժանի չէին համարուեր դրաւոր յիշատակարանաց մէջ երեւալու: Հին ու մայր լեզուները նախապատիւ էին եւ դրագէտք չէին խոնարհեր իրենց հանճարին զիտերն ստիկ համարուած լեզուաւ հրապարակ հանելու: Բայց մատենագիրք վերջապէս ծանցցան իրենց սխալմունքն եւ համոզուեցան որ այս ամբարտաւանական վարմունքը բռնաբարութիւն մըն է ժամանակին յաւաքագիտութեան: Թողլով հետեւապէս նախահարց լեզուն որ ոչ եւս իրենց էր, սխառ ժամանակին լեզուաւ՝ որով կը խորհէին ու կը խօսէին՝ նաեւ գրել: Այսպէս ահա իրենց մատենագրական ճարտարութեամբ ձեւելով եւ յարգարելով տակաւ՝ դռնհիւ անձեւ եւ անարդ լեզուն ճոխացուցին, ընդհանուր գրական լեզու բրին եւ յարմարեցին գիտութեանց ու արուեստից ամէն նորութիւնները բացատրելու:

Մենք ալ միթէ այսպէս չե՞նք կրնար ընել: Մինչեւ ցե՞րք այս տարտամ միւճակի մէջ յարատեւելով՝ հասարակաց մատենագրական լեզու մը պիտի չունենանք: Գաղղիացիք, Գերմանացիք, Իտալացիք եւ միւս ամէն աղգերն թէեւ ունենան բազմութիւ գաւառալեզուներ որ կը խօսուին անգաղար, սակայն ընդհանուր ընդունուած միայն մէկ լեզու ունին դրաւոր, զոր գաղտցներու մէջ մանկաւոյն կը սորվեցնեն: Մեր ալ խնդրածն այս է: Մենք ալ ունինք բազմաձեւ գաւառաբարբառներ՝ որոնց ապրիլն արգելուլ չենք կրնար, սակայն կարող ենք համերաշխութեամբ եւ միաբան հաւանութեամբ մէկ լեզու միայն գործածել դրաւոր եւ զայն վարժարանաց մէջ աւանդել տալոց: Այս գործն յաճախութեամբ գլուխ հանելու համար թերեւս խոհեմութիւն էր մեր մայրենի հնաւանդ լեզուն վերստին կենդանացնել,

որ այնչափ անկենդան ալ չէ, որչափ են եւրոպական չափ մը լեզուներուն նկատմամբ իրենց մայրերն։ Այս եթէ կարենար յաջողութիւն գտնել երբեք, իւրաքանչիւր գաւառալեզուք որ արդէն պատիւն ստացած են գրական հրապարակ ելլելու, իրենց այս պատուէն յօժարութեամբ կը հրաժարէին անշուշտ՝ հասարակաց մայր լեզուն պատուելու համար։ Սակայն այս դրեթէ անկարելի է եթէ ոչ տեսականապէս, զէթ գործնականապէս։ Վասնզի, ստոյգ է, հին հայերէն ոճով հոյովել ու խոնարհել (որոնք ամէն լեզուի հիմնական ու տարրական ձեւերն են) թէ՛ խօսելու եւ թէ՛ գրելու ատեն՝ կրնայ այնչափ դիւրին երեւալ մեզի, որչափ մեր նախահայրներուն իրապէս էր, սակայն անուրանալի են նաեւ գործադրութեան միջոցին մեր զէմ ելլելու մեծամեծ դժուարութիւններն (*), որոնք անտարակոյս անպարտելի պիտի մնան միշտ մեր նաեւ ամենարուսն ճգանց առջեւ։ Այս պատճառաւ ահա զրաջան աշխատութիւն կարծենք թէ է՝ եթէ այս կերպով քանանք հայերէն գրաւոր լեզուաց միութեան թեւակոխել՝ գաւառալեզուները տակաւ գործածութենէ կասեցնելով։ Ուրեմն, մեր կարծեաց համեմատ, ուրիշ հնար չկայ այդ լեզուական նորոգութեան մասին՝ եթէ ոչ միջոցները մտածել թէ ինչպէս կարելի է մեր արդի գրաւոր լեզուն միօրինակ գրել։ Այս կարեւոր միութիւնն, որով միայն մեր ազգն ու լեզուն կարող են զարգանալ ու բարգաւաճիլ, ուրիշ մերձաւոր առթիւ զմեզ պիտի զրազեցնէ։

Հ. ՍԵՐ. ՏԵՐՎԻՇԵԱՆ

(*) Այս դժուարութեանց միայն ուրիշ առթիւ կրնանք ցառել։



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն



Ընթերցողաց մեծ մասին օգտակար եւ հաճելի գործ մը ըրած կ'ըլլանք անշուշտ եթէ Հռովմէական պատմութեան ամենէ աւելի նշանաւոր անձանց կենաց պատմութիւնը Հանդիսիս Թիւերուն մէջ համառօտենք :

ՊՈՐԼԻՈՍ ԿՈՒՌՆԵԼԻՈՍ ՍԿԻՊԻՈՆ

Պորլիոս Կուռնելիոս Սկիպիոն Հռովմայեցի Հռչակաւոր զօրավարն Հռովմայ եւ Կարքեդոնի մէջ 17 տարիէ ի վեր տեւող պատերազմին վերջ տալու պատիւն ունեցաւ : Դեռ երիտասարդ հասակի մէջ Դիչինոյի վրայ Կարքեդոնացի զօրավար Աննիրազի դէմ տրուած ահեղ ճակատամարտին մէջ մեծ քաջութիւն եւ որդիական սիրոյ պայծառ հաւատարմութիւն ընծայեց : Հայրը վերաւորուած ըլլալով, անոր առջեւ անցաւ եւ իւր անձը իրիւ վաճան ընելով անոր, քանի մը ձիաւոր զօրաց օգնականութեամբ զայն ազատեց : Կաննեայ սոսկալի ճակատամարտէն յետոյ տեսնելով թէ քանի մը երիտասարդ Հռովմայեցի Պատրիկներ Իտալիայէն լիախշելու խորհուրդ կ'ընեն, սուրբ մերկանալով գոչեց «Հայրենիքը չի թողլու երդումն ըրէք, ապա թէ ոչ գձեզ կ'սպաննեմ» : Եւ նոքա երդումն ըրին :

Այս եւ ուրիշ սոյնալիսի քաջութեանցն համար 24 տարեկան ի Սպանիա փոխ-հիւպատոս տաւքեցաւ : Եօթն օրուան մէջ 300 մղոն ճամբայ ըրաւ, յաղթեց Կարքեդոնացւոց եւ մեծ կոտորած տուաւ անոնց :

Սպանիացւոց ալ տիրեց, աւելի բարեմոյն բարուք եւ գլխաւորութեամբ՝ քան թէ զինուց զօրութեամբ :

Իւր հայրենիքը դառնալով 29 տարուան հիւպատոս առնանեցաւ : Այն տուն համագեց Յերակոյաք, որ զիտալիա Աննիրազի գէնքերէն ազատելու համար պատերազմը յԱֆրիկէ մղելու էր : Հրամանատարութիւնը իրեն յանձնուեցաւ, եւ Կարքեդոնացիք չկարողին դէմ դնել, բանակին

կործանեցաւ և մայրաքաղաքնին յետին վիճակի հասաւ . զԱննիբաղ յիտալիայէն յԱփրիկէ կոչեցին , հայրենիքը պաշտպանելու համար . ի զուր ջանաց պատուաւոր պայմանօք խաղաղութիւնը ձեռք բերելու և Զամայի դաշտին վրայ 40,000 հոգի կորսնցնելով՝ իւր նաւերը երիտասարդ հռովմայեցի սպարապետին յանձնելու պարտաւորուեցաւ : Այս երեւելի յաղթութեանը համար Սկիպիոն Ափրիկեցի կոչուեցաւ :

Նոյն յաջողութեամբ Ատորիքի մէջ Անտիոքոսի դէմ պատերազմեցաւ , բայց երբ հռովմ դարձաւ , իւր նախանձորդներէն շատ ատելութիւն գտաւ : Անտիոքոսի վճարած պատերազմական ծախսոց հաշիւը իրմէ ուզեցին , բայց ինքն և ոչ իսկ պատասխանելով եղած զրպարտութեանց՝ իւր ծառայութիւնները յիշեցուց կծու ոճով և ի կապիտոլ դնաց ձեռք բերած յաղթութեանցն համար չատուածոց շնորհակալութիւն մատուցանելու : Ի վերջոյ Լինդեոնօ քաջուեցաւ և Քրիստոսէ տառջ 571ին վախճանեցաւ : Հելլենական դրականութեան սիրահարեալ էր , և Եննիոս բանաստեղծին պաշտպան հանդիսացաւ :

Կուռնելիոս Սկիպիոն որդիական սիրոյ , քաջութեան և զգօնութեան նախանձելի տիպար է :

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆՏՈՅՍ ՇԱՐԺՈՒՄՆ ԵՒ ՕՐՈՒԱՆ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Երկրագնացոյս արեգական բալրութիւն և իւր ասանցքին վրայ կատարած շարժման , և հետեւորար օրուան տեւողութեան հաշուոյն ճշգրտութեան նկատմամբ կ'երեւի թէ ըստ վերջին խուզարկութեանց եւ դիտողութեանց տարախուսանաց տեղի չէ մնացած , եւ ըստ այսմ , այժմեան ընկալեալ աստեղագիտական չափուց հիմնական միութիւնն կրնայ իրր անխորտիս համարուիլ : Վասն զի տալացուցեալ է թէ երկու

Հաղար տարիէ ի վեր օրուան տեւողութիւնն եւ ո՛չ իսկ մանրերկրորդի մը հարիւրորդին չափ այլայլեալ է: Երկրիս թաւալման վրայ ծովու խաղացքին պատճառած դար տա. դար յամբանալն իւր հաստարակչութիւնը կը գտնէ անտի, որ երկրագունտս հետզհետէ ցրտանալուն պատճառաւ միշտ խտանալու վրայ է, որ թաւալման շարժումը փութացնելու կը ծառայէ:

Նոյնպէս երկրիս շարժման վրայ ազդող երկրաբանական պատճառներն փոխադարձաբար չեզոքացեալ անազդեցիկ կը մնան, վասն զի եթէ հասարակածի կողմերն նիւթերու շեղջակայքը երկրիս թաւալումը կը թաւացնէ, ինչպէս կը հանդիպի Միսիսիբի գետին հեղեղներէն եւ մրուրներէն, որ Մեքսիկայի ծոցը կը թափին, միւս կողմանէ Սիպերիոյ Մաքէնսի եւ ուրիշ գետերը իրենց հեղեղքն եւ մրուրները դէպ ի բեւեռ մղելով, հակառակ արդիւնք կը պատճառեն: Ըստ այսմ նաեւ բեւեռներու կողմն սառույցներու շեղջակայքներն ծովու խաղացքէն պատճառեալ արագութեան կորուստը կը փոխարինեն:

*

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԵՐ

ՆԱԽՆԵԱՅ

ՊԻՍԻԴԵԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՎԵՅՈՐԵԱՅ

Վերջին տարիներուս մէջ մեծ հետաքրքրութեան նիւթ եղած է ազգային բանասիրաց համար Պիսիդեայ փիլիսոփայի վեցօրեայ քերթութիւն, որոյ հայերէն թարգմանութեան մի փոքրիկ հատուածին գտնուիլը «Պիսիդեայի է պատուի» վերնագրով, հին ձեռագրի մի մէջ 'ի Ս. Ղազար Վենեակոյ, ծանուցած է նախ առաջին Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, Հայկապեան Բառարանի սկիզբը: Սոյն հատակոտոր պատասխին վերայ 1875 տարւոյ Բազմալէպ Հանդիսի Բ. Պրակին մէջ գրած է հմտաբար Հ. Արսէն Սուքրի, հրա-

տարակելով զայն միանգամայն : Բիշ յետոյ Պ. Նորայր Ն. Բիւզանդացի 1880 ին իւր Հայկական բառաքնութեան բնութիւն գրքուկին մէջ աւետեց Պիսիդեայ ամբողջական թարգմանութեան գտնուիլը 'ի Միջագիւղ Կ. Պօլսոյ, Մեծարոյ Անտովնեան Հարց մատենադարանին մէջ : Զնոյն կը յիշատակէ համառօտիւ նաեւ Հ. Գարեգին Վ. Զարբ. իւր Մասենադարան Հայկական քարգրանդքեանց Նախնեաց մեծարդիւն երկասիրութեան մէջ, տպեալ 'ի 1889, հրատարակելով հանդերձ մասն ինչ թարգմանութեան պատասխիկէն, եւ ընդարձակագոյն տեղեկութեանց համար զրկելով զընթերցողն առ Բազմալէս 1875 տարւոյ,

Արդ մեծ բաղդ կը համարեմք ծանուցանել թէ Պասիկեւ Հանդէս իւր առաջին թիւերէն 'ի նախնեաց առ մեզ հասած այսպիսի մեծագին երկասիրութեան մ'ամբողջութիւնը պիտի սկսի հրատարակել, արդեամբ Մեծարոյ Անտովնեան Հարց, որք ամենայն կերպ գիւրութիւն եւ ընդունելութիւն ըրին մեզ, ոչ միայն օրինակելով եւ տալով իրենց քով գտնուած Պիսիդեայ Հայկական ամբողջ գործը, այլ նաեւ յանձնելով մեզ զձեռագիրն 'ի քննութիւն եւ 'ի հետազօտութիւն, որոյ համար կը յայտնեմք հրատարակաւ մեր խորին շնորհակալութիւնը :

Կը փութամք ուրեմն ուրախութեամբ Հանգիսիս յաջորդ թիւերուն մէջ հրատարակել զնոյն, ինչպէս ըսինք, ամենայն մանրակրկիտ քննողութեամբ, մեր աչաց ներքեւ ունենալով միշտ ձեռագիրը, եւ խօսելով նախ Պիսիդեայ անձին եւ արժէքին վերայ իբրեւ մատենագիր, եւ միանգամայն այն ձեռագիր հատորին վերայ՝ յորում կը գտնուի մեր միջին նախնեաց այս նուիրական աւանդը :





Պատկեր սասնենինգ օր մի անգամ կը հրատարակուի :

Բաժանորդագրութեան տարեկան գինն է Կ. Պօլսոյ համար 40 դանեկան , իսկ գաւառաց եւ օտար երկիրներու համար 50 դանեկան , բոլորստի ծախսը ի միասին հաշուելով :

Իւրաքանչիւր թիւ 3 դանեկան է :

Պատկերի խմբագրատունն է ի Բերա , Նէշիլ փողոց , թիւ 1 , ուր պէտք է դիմել բաժանորդագրութեան եւ քերթին վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :